

Ա. ԴԱՐԻՔՅԱՆ  
Ֆիլոլ. գիտ. դոկտոր

ԼԵԶՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ<sup>1</sup>

Հայերեն լեզու ասելով այսօր մենք հասկանում ենք արևելահայ կամ սովետահայ և արևմտահայ գրական լեզուները, ապա և հայերենի շուրջ չո բարբառները։ Մեր երկու գրական լեզուն ձևավորվել են վերջին 2—3 դարերում, թեև նրանց հետքերը կարելի է գտնել շատ ավելի վաղ ժամանակների գրական աղբյուրներում։ Ըստ էության գրական լեզուները, այսպես ասած, արհետական լեզուներ են, թեև նրանք ստեղծվել են կենդանի բարբառների հիման վրա, գրաբարի օգտագործումով։ Գրական լեզուները միջբարբառային լեզուներ են, նրանք իրեն բանավոր լեզու ստեղծվել են հայ հասարակության վերնախավի կողմից, որի մեջ առաջատար դիրք պատկանել է, ըստ իս, առևտրական գասին։ Իրոք՝ գրական լեզուները մի տեսակ ընդհանրական լեզուներ են, նրանք պետք են եղել այն մարդկանց, այն խավերին, որոնք Փեոդալիզմի հասարակական կյանքում կազմակերպել են ընդհանրական հարաբերություններ, միջբարբառային հաբարերություններ։ Այսպես՝ բարբառը օգտագործվում է իրեն լեզու միշտ տերիտորիայի մի որոշ հատվածում, մի որոշ միջավայրում՝ գյուղի, շրջանի, կիսագավառի, գավառի շրջանակում, ուրեմն բարբառը տեղական, տերիտորիայի մի փոքր հատվածի լեզուն է։ Ընդհանրական լեզուն, որ հետո դառնում է գրական լեզու կամ որ սովորաբար դառնում է գրական լեզու, որովհետև յուրաքանչյուր ժողովրդի գիր ընդհանրական բնույթ ունի, օգտագործվում է որպես հաղորդակցության միջոց ամբողջ տերիտորիայում, սակայն ոչ ամբողջ բնակչության կողմից, այլ

<sup>1</sup> Զեկուցված է Հայկական ՍՍՌ ԳԱ Ն. Մասի անվան լեզվի հնագիտական թեկայում, գեկտ. 27, 1948 թ.:

միայն տնտեսական և մտավոր վերնախավի կողմից։ Դասակարգ-  
դային հասարակության բարբառախոս ժողովուրդը և առաջին  
հերթին գյուղացին, այն էլ Փեղալիզմի ժամանակի գյուղացին,  
արտադրական հարաբերություններում բռնած իր դիրքով, իր  
գոյության բնույթով հասարակական իր խաղացած դերով և  
արժեքականությամբ բնավ շահագրգոված չէ և ձգտում էլ չունի  
իր բարբառից դուրս ուրիշ որևէ լեզու սովորելու։ Ամենաշատը  
նա սովորում է հասկանալ կամ նույնիսկ խոսել իր հարեան  
բարբառով կամ լեզվով և նրա հետաքրքրությունը ավելի հեռու  
չի գնում։ Սակայն ամեն մի հասարակության մեջ երկիրը կա-  
ռավարող դասը կամ տնտեսության կազմակերպման մեջ ընդհան-  
րական, ոչ աեղային՝ տերիտորիալ, շահեր ունեցող և գործու-  
նեություն ծավալող դասը շահագրգոված է միջբարբառային մի  
ընդհանուր լեզու ունենալու, որպեսզի «մարդկային հաղորդակ-  
ցության այդ կարևորագույն միջոցով» կարողանա կատարել իր  
քաղաքական և պետական ֆունկցիան։ Այդ ֆունկցիան նա չի  
կարող կատարել, եթե չկարողանա հաղորդակցվել իր դասի տար-  
բեր բարբառային ծագում ունեցող անդամների հետ։ Ուստի  
ամեն մի դասակարգային հասարակության մեջ անհրաժեշտու-  
թյուն է զգացվում վերնախավի համար ընդհանուր լեզու ունե-  
նալը, այս անհրաժեշտությունից է բխում դասակարգային հա-  
սարակության իշխող դասի ընդհանուր լեզուն։ Ուստի ամեն մի  
դասակարգային հասարակության մեջ լինում է մեկ ընդհանուր  
լեզու, որ վերնախավի դասակարգային լեզուն է, և բարբառների  
մի ամբողջ շարք, որ աշխատավոր ժողովրդի լեզուն է։ Կասկած  
չկա, որ ընդհանուր լեզուն ստեղծելիս օգտագործվում է ժողո-  
վրդական բարբառների լեզվական ֆակտուրան և մտածողու-  
թյունը։ Բայց որովհետև ստեղծվող լեզուն ընդհանուր լեզու է  
և նա ավելի կամ պակաս չափով օգտվում է բոլոր բարբառներից,  
ուստի ստեղծվում է մի տեսակ համարդական լեզու, մի միջին  
լեզու, որը ընդհանուր նմանություն ունենալով բոլոր բարբառ-  
ներին, մասնավորապես ոչ մեկի հետ նույնը չէ։ Երբ այդպիսի  
ընդհանուր լեզու ստեղծվում է, նա, այդ լեզուն, քանի որ կեն-  
դանի միջավայրի լեզու է, մշակում է իր սեփական օրինաշա-  
փությունները և իր լեզվական մտածողության մեջ, ինչպես և  
կառուցվածքի ամբողջության մեջ դառնում է ինքնուրույն և  
երբեմն նույնիսկ ինքնատիպ։ Հնարավոր է, որ այդպիսի լեզուն,  
դարդանալով վերնախավի միջավայրում, շեշտված կերպով երևան

բնքնություն և իր կառուցվածքի զարգացման մեջ, իր լեզվական մտածողության մեջ հիմնովին կերպով տարրերվի այն բարբառներից, որոնք նրան «մայր» են եղեր Այդպիսի դեպքում լեզուն սովորաբար պահպանում է լեզվական ֆակտուրայի իր ընդհանրությունը բարբառների հետ, այսինքը ովյալ ընդհանրական լեզվի նյութական մասը (բառապաշար, թեքման ձևեր, ածանցուններ և այլն) նույնական է լինում բարբառների հետ, այս կամ այն չափով նման յուրաքանչյուր բարբառի, բայց բնավ նույնական որևէ բարբառի հետ, իսկ լեզվական կառուցվածքով, լեզվական մտածողությամբ բոլորովին տարրերվում է իր «մայր» բարբառներից: Այսպես է մեր գրաբար լեզուն:

Ընդհանրական լեզուն, ինչպիսին էր գրաբարը, վերնախավի լեզու դառնալով, ինքնուրույն զարգացման ճանապարհ է ընտրում, բայց իր լեզվական ֆակտուրայի (նյութական մասի) նմանությունները ժողովրդական լեզուների հետ պահպանում է: Լեզվական մտածողության մեջ հաճախ նա ենթարկվում է օտար լեզուների աղղեցության և կամ յուրացնում է օտարամտածության շատ հիմնական տարրերը նկատի ունենալով, որ վերնախավի քաղաքական կյանքը անընդհատ շփման մեջ է դնում նրան օտար ժողովուրդների վերնախավի հետ, ուրեմն և նրա լեզվի հետ: Բնական է, որ օտարամտածությունը ենթարկվում է ընդհանրական լեզվի ինքնատիպ հատկություններին և մերվում այդ լեզվի մտածողական կառուցվածքի մեջ: Դա մեծապես նպաստում է ընդհանրական լեզվին կառուցվածքի տեսակետից հեռանալու ժողովրդական լեզուներից: Այդպես է եղել մեր գրաբար լեզուն:

Մեր գրաբար լեզվի տիպը, լեզվամտածողական ամբողջ կառուցվածքը միանգամայն տարրեր է բարբառներից: Այսպես՝ գրաբարը ուժեղ արտահայտված թեքական լեզու է, թեքականությունը որոշ դեպքում ստացել է նույնիսկ ներքին թեքման ընույթ (հոլովական կառուցվածքի մեջ), խոնարհումը սինթետիկ է, այդպես է նաև հոլովումը, այդպես է նաև բառաբարդությունն ու ածանցումը, սինթետիկ և վերացական կառուցվածք ունի նաև գրաբարի շարահյուսությունը: Մինչդեռ մեր բոլոր բարբառները հիմնականում կցական լեզվամտածողություն ունեն, կցական լեզվամտածողությունը գերակշռում է և՛ հոլովման մեջ, և՛ խոնարհման մեջ, և բառակազմության մեջ:

Նկարագրական կասուցվածք ունի նաև բարբառների շարահյուսությունը:

Աշխարհաբար ընդհանրական լեզուն ստեղծվել է բարբառների լեզվական մտածողությամբ ու դրանք դրսեորող լեզվական մատերիալով և գրաբարի բառերով ու բառապատկերներով։ Այդ լեզուն ստեղծողները եղել են հայ առևտրականները, մասամբ և արհեստավորական վերնախավը, հավանական է, և հոգևորականության ստորագաս ներկայացուցիչները, որոնք երկար ժամանակ փոխարինել են ժողովրդական ինտելիգենցիային կամ որոնք կաղմել են մի տեսակ համաժողովրդական ինտելիգենցիայի մի որոշ տարր։ Իհարկե այդ լեզվի կաղմավորման մեջ, ինչպես և այդ լեզվի պահանջը առաջադրելու հարցում, ամենամեծ դերը կատարել է հայ առևտրականը։ Այսպես՝ առևտրական ամենահին դոկումենտներում (15—16 դար) և կամ առևտրականների կողմից գրված դոկումենտներում նկատվում է մեր գրական լեզուն կաղմելու շատ վճռական և հաջողված փորձեր։ Մի կողմ թողնելով փոքր ծավալ ունեցող այլ և այլ դոկումենտներ, օրինակ բերենք ամենախոշոր դոկումենտը՝ Զաքարիա Ագուլեցու օրագիրը (1640—80 թ. թ.)։ Այդ օրագիրը մի առևտրականի հուշատետը է, որի գործունեությունը ծավալվում է հայկական մի քանի բարբառների միջավայրում (Երևանի, Ագուլիսի, Զուղայի, պարսկահայ զանազան բարբառների և արտասահմանի)։ Հեղինակը ազուլեցի է, այսինքն մի այնպիսի բարբառի ննրկայացուցիչ, որ, Մասի ասելով, հայերեն լեզվի մեջ մի տեսակ ինքնուրույն լեզու է, կարծես թե հայերենից բոլորովին տաքբեր, որովհետև միանգամայն անհասկանալի է հայերենի այլ բարբառներով խոսող մարդկանց համար։ Այդ Ագուլեցին իր օրագրի լեզուն չի ընտրում իր բարբառը, այլ, ընդհակառակն, հետեւղական կերպով խուսափում է այդ բարբառից, թեև միանգամայն աղաւավել չի կարողանում։ Նա փորձում է գրել այդ ժամանակվա ընդհանրական լեզվով, այսինքն գրաբարով, սակայն առաջին մեկ երկու նախադասություններից հետո նրա թերի գրաբարագիտությունը թելագրում է նրան աննկատելիորեն սահել ավելի հասկանալի լեզվի և նա գրում է Երևանի, Զուղայի, Ղարաբաղի բարբառների մի համադրական լեզվով։ Այդ լեզվի մեջ գրաբարը իշխում էր իր ուղղագրությամբ և բառապաշտով, բարբառները իրենց լեզվական մտածողությամբ և ահա-

այդ համադրությունից առաջ է գալիս մեր արդի դրական լեզվին միանդամայն մոտ մի լեզու։ Ահա օրինակ՝

«Թվին ողջ (1645) մարտի նույն Աքուլիս, որ ես Աքուլեցի Քուրդունց Աղամիրի որդի Զաքարէս, որ ես Զաքարէս էի ծէ ամաց, նաև և առաջի իմ ճանապարհ գնալն այս է, որ սին բէռն խամ ապրիշմով, իմ հօր, մօր, իմ եխպայր Շմաւոնի, սուցայ կամով ինձ դրին իմ հօր եխպօր որդի պարոն Նիկողոսին քետ, գնացի Իզմիր։ Պարոն Նիկողոսն էլ մին բէռն ապրիշում ունէր։ Դարցեալ, Նիկողոսն իւր ապրիշումն ծախէց ոչ, գնաց ի Յուանգստան, ի քաղաքն Լիոնայ։ Դարցեալ, ես Զաքարեայ իմ մին բնոն ապրիշումն, մեր Աքուլաց շատ բազրկան կեր Իզմիր, ծախեցին, թէ խարջ, թէ գմբուկ թէ ժող բորջի, ամէն տվին, մնաց խալիս ընն (870) մառչիլ սիվիլայ։ Զերայ ապրիշումի մոգրն, որ զ հողայ է, լիդրն տվի լր մառչիլ. քնար ապրիշում էր, լու բաղարի հանդիբեցայ։ Դարձեալ, այս փողս ըն (800) մառչիլ տվի մեր աքուլեցի աղբոյադչի Վարդան, որ բերաւ Աքուլիս, տվեց իմ հայր Աղամիրին և իմ եխպայր Շմաւոնն, Դարցեալ, և Զաքարեայ ն (70) մառչիլ փող վեր կալայ, գնացի Բուբսա, զ (3) ամիս կացայ, գնացի Հստամբոլ, ինձ համար ալիշ-վերիշ արարի։ Դարցեալ, իմ եխպայր Շմաւոն ժետ ուղարկած փողն վեր առնու, գնայ Հստահան, ապրանք առնու, ծախէ։ Դարցեալ, այս Շմաւոնս զ (6) Փիթելի, մի քանի դանակ, դվիթ, դալամ, նախշուն մի քանի դատ աղարկեց Հստամբոլ, ինձ Զաքարիս հասաւ։ Շախեցի, գ (80) մառչիլ հանեց, որ էլաւ իմ հօր փողէն ինձ հասաւ մին նծ (150) մառչիլ։ Այս էլաւ ինձ Զաքարիս հայրենի փողէն մայացաւ։<sup>1</sup>

Բերենք մի ուրիշ օրինակ, որ նույնպես հաստատում է մեր այս կարծիքը։

Հոլանդացի Շրնդերը 1711 թ. Ամստերդամում տալագրել է իր Thesaurus linguae armeniacae, antiquae et hodiernae (Արամյան լեզվի գանձ) հայոց լեզվի պատմությանը նվիրված մի կարեռ աշխատություն։ Գրքի վերջում Շրնդերը տրամախոսական մեթոդով այդ ժամանակվա խոսակցական լեզվով տեքստեր է բերում։ Դրանցից մեկը Ֆրանչեսկոյի և Սաֆարի (վերջինս հայ է) զբույցն է։ Ահա մի նմուշ այդ զբույցից՝

«Ֆ. Խաղող էլ մւնիք ձեր երկրումն»։

<sup>1</sup> Զաքարիա Ագուլեցու օբագրությունը. էջ 139, 1938 թ., Երևան.

Ա. Ունինք զարմանալի և պատուական խաղող, որ ուտելոյ և շիրա շինելոյ քանց չափն ավելիայ, չունքի մեր ազգըն սարքաբն շատ պաքն որ ունին՝ համիշա գինի չեն խըմել, դեռ կառեն թէ Մասսիս սարի քօվն մին Այգեստան կայ, որ Արկուուիայ անունը գինի՝ ունի որ՝ ձէթի նման կուվառէ:

Ֆ. Ի՞նչ գլխաւոր սանիաթ կա հայոց մեջն:

Ս. Ամ. հասարակ սանիաթ մեր ազգին մեջն կայ ինչպես տսենք Դերձիք, Գթակակար, Բաբուչկար, Դալլաք, Խառատ, Դուրգար, Որմնադիր, Ոսկերիչ, Դարբին, Զուլհակ, Գրագիր, Կաղմարար, Ներկարար, Մաղկարար, Մագաղաթագործ, Ապշշմագործ, Տպագիր, Բասմաջի և այլ բազում:

Ֆ. Հիմա շաղավաթ արտ ձեր վաճառականների առ ու ծախսն ինձ ասա ի՞նչ բարաթ ապրանք կու բանեցնեն և ի՞նչ երկիր կերթանք:

Այս լեզուն, տեսնում ենք, որ բավական նման է Զաքարիա Ազուլեցու լեզվին և հաստատում է մեր կարծիքը իր կաղմավորման մասին: Բայց որ այդ լեզուն իսկապես մի ընդհանրական լեզու է եղել, դրա լավագույն ապացույցը այդ նույն գլուխում բերված մեկ ուրիշ հատվածն է: Այդ հատվածը ևս տրամախոսական մի տեքստ է, որով նկարագրված է հայ առևտրականների խնջույք: Այդ խնջույքը կազմակերպողները Ագուլեցի են՝ զոկ:

Խնջույքի սկզբին, երբ հյուրերը հավաքվում են՝ տան տերը իրեն լավ չի պահում: Յուրայիններից մեկը, միանգամայն վստահ, որ ուրիշները իրեն չեն հասկանա, իր բարբառով, զոկերեն, դիտողություն, է անում տանտիրոջը, վերջինս, ինչպես և մի այլ տանեցի, մասնակցում են զրույցին: Ահա այդ զրույցը:

«Բ. Հէրբար՝ շօտ զօվը տալիս, աղիկն ան այ, օր զքի մույն փուքը քօշ պահիս, զարա հրամանքը տօմն տայրըս, ըխախար օմնիս:

Ա.—Ուղուրդ այ նասում Բարաղամն, պարուն Տիրատուր, քու հրամանքը մուսանիրի տայր ըս, զօկ պարուննէրս քու տօմնը կանչած, օր զօվդ անիք, օվրախ պահա՝ շօտ քամի նարիլն աղիկ չի:

Տ.—Պարուն՝ դառ դուք ըշխաղքիս բանին խըրէր չիք՝ թղօթիւն արիք, դառ դուք զօվդն նիդիլ չիք, թա ունչ այ. իս անդադար միծ միծ մարդու հիտ զօվդ ըմ արտծ՝ դուք անդադար լսօծ չիք. նղանիք ունչ ախպարք:

Դ. Հրես փլամբ ու գորովուն եկամ, ի՞նչ էք խոսում, պարզ խոսնցէք, որ մննք էլ իմանաք»:

Ինչպես երևում է այդ զրույցից, զոկերենը բոլոր հայերի կողմից, որ մասնակցում են այդ խնջույքին, դիտվում է իբրև անհասկանալի լեզու, որով խոսում են միանույն բարբառի ներկայացուցիչները, իսկ միջրարբառային հաղորդակցության համար կա ավելի հասկանալի լեզու, որը, ըստ բոլոր հյուրերի, նաև ըստ Շրադերի, հասկանալի է բոլորին, դա մեր արդի գրական լեզուն է, Զուղայի, Երևանի կամ մի այլ բարբառի աննշան խտոնուրդով:

Կրկին անգամ տեսնում ենք, որ այդ լեզուն կազմված է բարբառային լեզվական մտածողությամբ, և դրանք դրսեորող լեզվական մատերիալով՝ գրաբարյան բառերով և բառապատկերներով:

Այսպիս՝ այս լեզուն, այս ընդհանրական լեզուն, ինչպես վերևի օրինակն է ցույց տալիս, առաջացել է հայ հասարակության մեջ ընդհանրական շահ ունեցող առևտրական դասի պահանջով և ջանքերով։ Հիմնականում այդ լեզուն ստեղծելու համար օգտագործվել են բարբառների լեզվամտածողությունն ու դրանք դրսեորող լեզվական մատերիալը, գրաբարի բառապաշտին ու բառապատկերը։ Ըստ որում չմոռանանք հիշել, որ գրաբարյան բառապաշտին առաջարկ արդեն շատ մեծ ընդհանրություններ ուներ բարբառների հետ, այդ պատճառով էլ «գրաբարյան բառապաշտ» ասելով չպետք է հասկանանք իբր գրական լեզուն կառուցելու համար օգտագործված բառապաշտը միմիայն գրաբարի սեփականությունն է։ Բնակ ոչ. դա մեծ մասամբ լեզվական այն ֆակտուրան է, որ վազուց ի վեր ընդհանուր էր գրաբարի և բարբառների մեջ։

Այսպիս է կազմվել մեր ընդհանուր լեզուն նախ իբրև ընդհանուր խոսակցական լեզու, ապա միայն իբրև գրական լեզու։

Այդ գրական լեզուն, այդ ընդհանուր լեզուն, աստիճանաբար դառնում է ինքնատիպ, աղատվելով մի կողմից գրաբարից կախված լինելու վիճակից, մյուս կողմից բարբառների կախումից։ Աշխարհաբար գրական լեզվի հասարակական օրինականացումը, այսինքն՝ վազուց արդեն առաջացած ընդհանուր լեզուն գրական դարձնելը, գրական անդաստանում հաստատելը իրավես մի պայքար էր այդ լեզուն ինքնուրույն դարձնելու և ազատվելու գրաբարի և բարբառների կախումից։ Այդ հարցում վճռա-

կան դեր է կատարել հայ դեմոկրատական ինտելիգենցիան 19-րդ դարում, այսինքն այն ժամանակ, երբ ստեղծված ըուրժուական հարտիկերությունների հետևանքով առաջանում է միջանկյալ դասը՝ ինտելիգենցիան, որը հայ հասարակության մեջ ուներ ժողովրդա-զեմոկրատական ուժեղ թե (Արտվյան, Նալբանդյան, Շահազիդ, Պողյան և այլն):

Ֆեոդալական հասարակարգում բարբառների օգտագործմամբ հայ հասարակական վերնախավը՝ ազնվականությունը, իր դասակարգային ֆունկցիան<sup>1</sup> կատարելու համար ստեղծել է խոսակցական ընդհանուր լեզու՝ գրաբար. այդ լեզվով կազմակերպվել ու երկարատես պահպանել է իր գոյությունը հայ վաղ շրջանի ֆեոդալական պետությունը: Ֆեոդալիզմի զարգացման ավելի ուշ շրջանում, չնայած անկախության կորստին, կամ հենց դրա պատճառով, գրաբար լեզուն դարձել է գրական լեզու այն ժամանակ, երբ նրա համար գիր է հնարվել: Ըստ երեսույթին հայ ֆեոդալ դասակարգը իր դասակարգային ֆունկցիան կատարելու համար, այսինքն՝ հայ հասարակությունը կազմակերպված վիճակում պահելու և այդ ֆեոդալական հարաբերությունները անխափան վերաբռնական համար չէր կարող բավականանալ. միայն բանավոր ընդհանուր լեզվով, քանի որ նա իր մի շատ խոշոր հենարանը, իր պետականությունը կորցրել էր, ուստի անհրաժեշտություն է զգացել նաև գրավոր լեզվի, կամ եղածքանավոր լեզուն գրավոր դարձնելու: Հայ ֆեոդալական դասակարգի հասարակական ֆունկցիայի կատարումը իր ժամանակին ապահովում էր հայ ժողովրդի ամրողական գոյությունը, այդ պատճառով էլ գրաբարի գրական լեզու դառնալը գուրս էր գտվում ֆեոդալ դասակարգի շահերի սահմաններից և դառնում էր համաժողովրդական գործ: Այսպիսով գրաբարի գրական լեզու դառնալը մեր ժողովրդի և մեր հասարակության գոյության անհրաժեշտությունից բխող պահանջ էր:

Նույն ձեռվ պետք է դատել նաև նոր ժողովրդակաների համար: Երբ հայ հասարակությունը թեակոխեց ֆեոդալիզմի քայլայման շրջանը, գրաբար լեզուն շարունակվում էր օգտագործ-

<sup>1</sup> «Դասակարգային ֆունկցիա կատարել» մեր կարծիքով նշոնակում է էր ժողովրդականական կազմակերպել ու ղեկավարել հասարակությունը, ներկայացնելով նրա զարգացման ու առաջընթացի հնարակորսությունները տվյալ հասարակության հարաբերությունների պայմաններում:

վել աղնվական դժուակարդային ֆունկցիան իրականացնելու հաստար: Սակայն դա չէր բավարարում ժամանակի պահանջը: Այդ շրջանում, վեղալական հարաբերությունների ներսում ծնունդ տուած առետրական հարաբերությունները վերափոխել էին հայ հասարակությունը և գրաբարը չէր կարող լիովին բավարարել այդ նոր հասարակության պահանջները: Ստեղծվում է, ահա, միջին հայերենը, որը նոր ընդհանրական հայերեն կազմելու հաջողված վորձ էր: Նոր դարերի առետրական հարաբերությունները առաջ էին բերել առետրականների դաս, որ իր դասակարդային ֆունկցիան կատարելու համար, հիմնականում արտադրողական ուժերը զարդացնելու համար, անհրաժեշտություն էր զգում բանավոր ընդհանրական լեզու (աշխարհաբար) ստեղծելու և, ինչպես Ագուլեցու և Շրոգերի աղբյուրներից գիտենք, այդ լեզուն օգտագործելու էր իր հասարակական ֆունկցիան կատարելու համար: Սակայն երբ բուրժուական հարաբերությունները դարձան հասարակության դերակշռող հարաբերություններ, հայ բուրժուական դասակարգը՝ իր հասարակական ֆունկցիան կատարելու համար անհրաժեշտություն զգաց գրավոր լեզվի, գրական լեզվի: Այս պահանջը զուգադիպում էր հայ բուրժուական հասարակության գոյության ու զարգացման պահանջին, որը այն ժամանակ ըխում էր հայ ժողովրդի հասարակական գոյության պահանջից: այդ պատճառով էլ այդ գրական լեզուն օրինականացնելու պահանջը միաժամանակ համաժողովրդական շահերից էր բխում:

Ուստի և 19-րդ դարի ժողովրդա-դեմոկրատական գործիչները, լավ գիտակցելով գրական լեզվի ինքնահաստատման պահանջի նույնացումը կամ նույնությունը ժողովրդական շահերի հետ, պայքարի նետվեցին աշխարհաբար գրական լեզվին հասարակական օրինականություն տալու համար: Ինչպես տեսնում ենք, գրական լեզուների առաջացումը, ըխելով այս կամ այն դասակարգի շահերից, տեղի է ունենում այն ժամանակ, երբ այդ շահերը զուգադիպում են հասարակության զարգացման շահերին: Բայց այստեղից երևում է, որ ընդհանրական լեզուները դառնում են սովորաբար գրական լեզուներ, ուստի և գրական լեզուներ ասելով պետք է հասկանալ նաև ընդհանրական լեզուներ, միջբարբառային ընդհանուր լեզուներ, որ սովորաբար գրակարգային լեզուներ են և առաջանում են պատմական շատ-

որոշ շբջաններում, հասարակական հարաբերության գարդացման շատ որոշ փուլերում։ Նրանք մեռնում կամ վերանում և կամ հիմնովին վերափոխվում են, երբ մեռնում են նրանց հենարան դասակարգերը։ Երբ վերափոխվում են հասարակությունները, յուրաքանչյուրը դրանցից, այդ լեզուներից, հասարակական հարաբերությունների նոր էտաղում մնում է հասարակական կյանքի դեկն իր ձեռքը վերցրած նոր դասին ու դասակարգին ի սեփականություն։

Իսկ ժողովրդական լեզուները, բարբառները, դալիս են անկախ լեզուների վիճակից, ապրում ու անցնում են ամբողջ ֆեոդալիզմի դարաշրջանը, անդամ կապիտալիզմի դարաշրջանը, քանի կա ու մնում է գյուղացին, քանի կան ու մնում են գյուղի ու քաղաքի տարբերությունները։ Նրանք կարող են վերանալ միայն սոցիալիզմի կենցաղ դառնալու ժամանակաշրջանում, ուրեմն նրանք չեն ու չեն կարող լինել գրաբարի ծնունդ, կամ գրաբարյան աղավաղումներից առաջացած։ Ընդհակառակն, նրանցից են ծնունդ առել, նրանցից են սնվել գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբար լեզուն և շարունակվում է սնվել արդի սովորական հայերենը։ Այսպես է գրական լեզուների հարցը, հայոց գրական լեզուների տարբերակների հարցը։ Այժմ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում հայերենի բարբառները։

Հստ ձևաբանական կլասիֆիկացիայի հայերենի բարբառները խմբավորվում են 4 ճյուղի մեջ, որ կոչվում են «Ում», «Կը», «Է» և «Ծ»։

Այդ տնունները պայմանական են, գիտահետազոտական աշխատանք կատարելու համար հնարինված։ բայց դրանց տակ թաքնված են (լեզվական մտածողության տարբերակները, տեսնենք որոնք են այդ տարբերակները։

«Ում» ճյուղի բարբառները իրենց ներկան կազմում են «Ում» վերջավորություն ունեցող դերբայով և օժանդակ բայովորինակ՝ գրում եմ, գրում իմ, կյիրըմ եմ, կյիրըմ ամ և այլն։

Այս կազմությունը անալիտիկ կազմություն է, նկարագրական կազմություն է, պրիմիտիվ կազմություն է։ Բառացի՝ դանշանակում է «Ես գրի մեջ եմ», «Ես գրելու ընթացքի մեջ եմ»։ Այս մտածողությունը բարբառային է, ժողովրդական, որովհետեւ ժողովրդի լեզվի մեջ ասվում է՝ «Դործի մեջ եմ», նշանակում է՝ «գործ եմ անում», «Բանի մեջ եմ», «նշանակում է՝ «բան եմ» անում»։

Այդ ձեին զուղահեռ գոյություն ունեն նաև հետեւյալ ար-  
տահայտչական ձեերը:

«Ես բանի եմ, այսինքն՝ «Բան եմ անում», «Ես գործի եմ,  
այսինքն՝ «Դործ եմ անում», «Ի՞նչ բանի ես, — «Սովորում եմ»  
և այլն:»<sup>1</sup>

Հավարիկի բարբառում այդ արտահայտչական ձեը ավելի  
մոտ է նկարագրականին: Այսպես՝ այդ բարբառում ասվում է՝  
«գրելում ես», այսինքն՝ «գրելու մեջ ես», «գրելում է», այսինքն՝  
«գրելու մեջ է» և այլն: Այսպիսով լեզվական մտածողությունը  
բայով արտահայտված գործողությունը պարզապես նկարագրում  
է, այսինքն՝ ներկայի գաղափար արտահայտելու համար, որ ի-  
հարկե վերացական գաղափար է, ասում է՝ «գործողության ըն-  
թացքի մեջ եմ»: Այս մտածողությունը կոնկրետ է և կազմում է  
զրաբար բայերի կազմության նախորդ փուլը: Հայագիտության  
մեջ վեճ կա «գրում» ձեի շուրջը:<sup>2</sup> Որ իսկապես «գրում» զերբա-  
յը ներգոյական հոլովի գաղափար է արտահայտում, մի կարևոր  
ապացույց ես ունենք: Այդ ապացույցը այն է, որ «գրում» կամ  
նման զերբայով ժամանակ են կազմում բոլոր այն բարբառնե-  
րը, որոնք միաժամանակ և ունեն այս վերջավորությունն ու-  
նենցող ներգոյական հոլով: Այսինքն՝ այն բարբառները, որոնք  
«գրում» ձեով ներկա են կազմում, ունեն «ում» վերջավորու-  
թյուն ունեցող ներգոյական հոլով. գրանք են՝ Թբիլիսիի, Օրա-  
րատյան, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Զուղայի և  
Ազուլիսի, այսինքն՝ «Ում» ճյուղի բոլոր բարբառները:

Հասկանալի է, որ ներգոյական հոլով կազմելը այդ բար-  
բառների լեզվական մտածողության հատկությունն է: Ճիշտ է  
«Ա» ճյուղին չպատկանող Հադրութի, Ղարաղաղի, Մեղրու, Կար-  
ճեանի և Արդվինի բարբառները նույնպես ունեն ներգոյական  
հոլով «ում» վերջավորությամբ, բայց այդ բացարելի է երկու  
պատճառով:

Առաջին՝ այդ բարբառները գտնվում են «Ում» ճյուղի  
բարբառների ուժեղ աղղեցության տակ: Անվիճելի է, որ Հադ-

<sup>1</sup> Այս մտածողությունից առաջացել են դրաբարի խոնարհման՝ սինթե-  
տիկ ձեերը, այն է՝ գործի եմ՝ գործեմ, գործի ես՝ գործես և այլն. գործի  
էկ՝ գործէի, գործի էիր՝ գործէիր:

<sup>2</sup>Տես Ա. Շանիձե, Հայ բարբառագիտության մի նոր գործ:

բութի և Ղարադաղի բարբառները Ղարաբաղի բարբառի խիստ  
մեծ ճնշման տակ են եղել երկար ժամանակ այն աստիճան, որ  
արդեն անհայտանալու վրա են և Ղարաբաղի բարբառից ընդունել  
են ոչ միայն ներգոյական հոլով կազմելու հատկությունը, այլև  
այնքան շատ հատկություններ, որ իրենց ինքնությունն արդեն  
կորցնելու վրա են: Մեղրու բարբառը, որ, իմ կարծիքով, ընդար-  
ձակ բարբառ է եղել և գրավել է Արևիքի ու Կապանի արևելյան  
մասը, այժմ արդեն մեռած բարբառ է, և այդ գործում ամենամեծ  
գերը խաղացել է Ղարաբաղի բարբառի ազդեցությունը: Բավա-  
կան է հիշենք, որ Արևիքի և Կապանի շրջանի խոսվածքները  
շատ են նման Ղարաբաղի բարբառին, բայց որովհետև նրանք  
ունեն մի շարք այնպիսի հատկություններ, որոնցով մասնակի-  
կերպով տարբերվում են Ղարաբաղի բարբառից, ուստի չենք  
սխալվում, երբ ասում ենք, որ այդտեղի խոսվածքները Ղարաբաղի-  
բարբառից տարբեր բարբառների են պատկանել անցյալներում:  
Ղարաբաղի բարբառի գգալի ազդեցությունը նկատվում է նաև  
Կարճեանի բարբառի վրա, ուրեմն դրա ներգոյականն էլ բացա-  
տրվում է այս ճանապարհով: Հիշածս բարբառները «Ս» ճյուղի  
բարբառներն են, որոնց բավական նման է Ագուլիսի բարբառը:  
Ագուլիսի բարբառի մի շարք հատկություններ (անցյալի ձեերի  
կազմությունը, անցյալ կատարյալի բացակայությունը և այլն)  
վկայում են, որ այդ բարբառը երբեմնի պատկանել է «Ս» ճյուղին:  
Եվ իրոք այդ բարբառին պատկանող ծղնա և Ռամիս գյու-  
ղերի խոսվածքները կիսով չափ պատկանում են «Ս» ճյուղին:  
Եվ Ագուլիսի բարբառը իր փոխանցումը «Ս» ճյուղից «Ում»  
ճյուղին կատարել է Արարատյան և Զուղայի, նաև Ղարաբաղի  
բարբառի ազդեցությամբ: Շրջապատված լինելով «Ում» ճյուղի-  
բարբառներով՝ Ագուլիսի բարբառը ներկայի կազմության մեջ  
իր լեզվական մտածողությունը փոխել է և դրա հետևանքով  
գարձել է «Ում» ճյուղի բարբառ: Արդվինի բարբառը նույնպես  
ունի ներգոյական հոլով, թեև ինքը պատկանում է «Ս» ճյուղին:  
Բայց մենք արդեն ապացուցել ենք, որ Արդվինի բարբառը  
արևելքից եկած «Ս» ճյուղին պատկանող մի բարբառի և Տա-  
յոց աշխարհի բարբառի համաձուլումն է, որի պրոցեսում Արդվի-  
նի բարբառը պահպանել է իր ներկայի կազմությունը, իսկ իր մի  
շարք հատկությունները յուրացրել է Տայոց բարբառից, որոնց  
թվում և ներգոյական «Ում» վերջավորությունը: Տայոց բար-  
բառը իրբև ինքնատիպ և ուժեղ արտահայտված բարբառ վկայ-

ված է 8-րդ դարում Ստեփանոս Մյունեցու կողմից, բայց այդ բարբառը հայ բարբառագիտությանը անծանոթ էր։ Արդվիճի բարբառի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Տայոց աշխարհի բարբառը եղել է «Ում» ճյուղի բարբառներից մեկը։ Այսպիսով առայժմ մեզ հայտնի է դառնում, որ «Ում» ճյուղը բռնել է Հայկական Պարի հյուսիսում Զուղայից մինչև Սև ծովի ափերն ընկած տարածությունը։ «Ս» և «Կ» ճյուղի բարբառների ազդեցությամբ «Ում» ճյուղը կորցրել է իր բարբառներից մեկը։ Տայոց բարբառը, բայց ինքն աղդելով «Ս» ճյուղի մի ուրիշ բարբառի վրա՝ Ագուլիսի բարբառի վրա, շահել է նրան, վերածելով «Ում» ճյուղի բարբառի։

Այդ բոլորը շատ հետաքրքրական վկայություններ են մեր բարբառային ժողովրդի պատմության, նրա տեղաշարժի ու տեղափոխության և լեզվական ներքին հարաբերությունների համար։ Հատկանշական է հիշել նաև, որ Ուրմիայի բարբառը, որ պատկանում է «Ս» ճյուղին, ընկած լինելով «Լ» և «Կ» ճյուղերի բարբառների միջավայրում, ներգոյական հոլով չունի։ Պարզ է, որ թէ «Լ» և թէ «Կ» ճյուղերը, ներգոյական հոլով չունենալով, իրենց հարեանի վրա այդ ուղղությամբ չէին կարող ազդել, ուստի և Ուրմիայի բարբառը մնացել է առանց ներգոյական հոլովի։

Այդ հակադարձ ապացույց է, որ «Ս» ճյուղը ներգոյական հոլով չի ունեցել և, եթե նրա բարբառներից մեծ մասը այդ ունեն, դա «Ում» ճյուղի ազդեցության հետևանք է։

2-րդ հիմնավորումը, թե ինչու «Ս» ճյուղի բարբառները «Ում» ճյուղից ստացել են ներգոյական հոլովի այս վերջավորությունը, դա այն է, որ «Ս» ճյուղի բարբառները ևս իրենց ներկա ժամանակը կազմում են ներգոյական ըմբռնումով, նույնպես նկարասգրական եղանակով, ինչպես «Ում» ճյուղի բարբառները։ Սակայն այստեղ լեզվական մտածողության մեջ մի նուրբ տարրերություն կա։

«Ում» ճյուղի բարբառները ներկայի գործողությունը նկարագրելու համար կազմում են բայահիմքի կամ բայահիմքը կազմող գոյականի ներգոյական հոլովը և ապա օժանդակ բայով, որը նշանակում է «կա», «գոյություն ունի», հաղորդում ներկայի գաղափարը։ Այսպիսով «Ում» ճյուղի բարբառների բայական կազմությունը գոյական կազմություն ունի, գոյականի օգնությամբ է կազմվել։ Դա ապացույց է, թե հայերենում միայն

«Ժանդակ բայն է բայական խոնարհում ստանում, իսկ մյուս բոլոր բառերի խոնարհումը գոյականների հոլովմամբ է կատարվել»

«Ա» ճյուղի բարբառները իրենց ներկան կազմում են «ալիս», «էլիս», «այիս», «իս», «ես» վերջավորությամբ (մնալիս—Արդվին, մնայիս—Ղարադաղ, մնայս—Կարճեան, մնաս—գիրի-կիրէս Մեղրի, Հաղըրութ և Ուրմիա):

Այսպիսով «Ա» ճյուղի խոնարհման կազմության լրիվ ձևերն են «ալիս», «էլիս» վերջավորություն ունեցող ձևերը՝ մնալիս, գրելիս: Այս ձևի կազմությունը շատ պարզ վկայում է, որ դա «մնալիք», «դրելիք» ուղղական ձևից է ստացվել «ք»-ն փոխարինվելով «ս»-ով, այսինքն՝ «մնալիք», «գրելիք» ձևերի հայցական հոլովը: Ի՞նչ լեզվական մտածողություն է թաքնված այստեղ: Մնալիս, գնալիս ձևը այժմյան գրական լեզվի և «Ում» ճյուղի բարբառների մեջ օդտագործվում է իրեն գլխավոր գործողության զուգահեռ գործողություն ցույց տվող ձև, այսինքն թե՝ «Ենթական մի գործողության մեջ է, երբ սկսում է կատարել մի ուրիշ՝ գլխավոր, գործողություն», այսպես՝ «Փողոցվ անցնելիս հանդիպեցի բարեկամիս» նշանակում է, թե՝ «Ենթակայի հանդիպելու գործողությունը կատարվեց այն ժամանակ, երբ նա գնալու գործողության մեջ էր»: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ գործողությունները ներգոյական հոլովի ըմբռնումով են արտահայտված և ձևով տարբեր լինելով՝ իմաստով միմյանց հետ նույնն են: Ուստի շատ բնական է, որ «Ում» ձևի ձնշող գերակշռության ժամանակ «ալիս», «էլիս» ձևերով մտածող հասարակությունը կարող է հեղտությամբ ընդունել ներգոյական հոլովածեն իր մեջ: Այսպիսով, եթե այդ ազդվելու փաստը դրանով իսկ կասկածի ենթակա չէ, այսինքն թե՝ «Ա» ճյուղի բարբառները ներգոյական հոլովի ձևը ստացել են «Ում» ճյուղի բարբառներից ներկայի կազմության ձևի մեջ, այնուամենայիդ, նրանց տարբերությունը պահպանվում է: Կարող ենք, սակայն, ասել, որ «մնալիս» և «գրելիս» ձևերը իմաստով հավասար են «մնում» և «գրում» ձևերին. այսինքն՝ դրանք արտահայտում են ներգոյական հոլովի գաղտնաբառ: Լինելով հայցական հոլովածեն, այն էլ հոգնակի հայցական հոլովածեն, կասկած չկա, որ «մնալիս», «գրելիս» ձևերը կարող են արտահայտել ներգոյական հոլովի գաղափար, քանի որ հոգնակի հայցական հոլովը գրաբարի մեջ «ի» նախդիրով նաև այդ նշանակությունն ունի: Բայց «մնալիս», «գրելիս» ձևերը, ինչպես

վերեռում ասացինք, ուղղական «մնալիք» և «գրելիք» ձևերի հայցականն են, որտեղ «ք» փոխարինված է ս-ով: Աւստի «մնալիս», «գրելիս» ձևերի մեկնությունը պետք է փնտրել «մնալիք», «գրելիք» ձևերի մեջ: Այժմ դրանք նշանակում են առարկա, որ պիտի լինի կամ գործողության գաղափար, որ պիտի կատարվի: Այսինքն՝ «գրելիք» նշանակում է մի բան, որ պիտի գրվի, «մնալիք» նշանակում է մի բան, որ պիտի մնա:

Ավելի ըմբռնելի են այդ ձևերը ներգործական բայերի մեջ: այսպիս՝ «առնելիք» նշանակում է այն, որ պիտի առնվի, տեսնելիք՝ այն, որ պիտի տեսնվի, կարդալիք՝ այն, որ պիտի կարդացվի, ստանալիք՝ այն, որ պիտի ստացվի, այսինքն թե՝ այդ ձևերը ցույց են տալիս առարկա, որի վրա պետք է կատարվի բայիմաստի ցույց տված գործողությունը: Դրաբարում, սակայն, այդ ձևերը ունեն նաև մի այլ իմաստ, որ հավանական է այդ ձևի հին իմաստն է:

Այսպես, օրինակ՝

«Զի եթէ խոփ և գերանդի և մանգաղ ոք գործիցէ, ի բարւոք իրս պաշտեցաւ. ապա եթէ սուսեր և գեղարդն և պաք, և այլ ինչ զէն՝ որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ և պատճառ չարութեանն գործելին, և ոչ երկաթն»:<sup>1</sup>

Ինչպես տեսնում ենք՝ ընտիր գրաբարից բերված այս օրինակի մեջ «գործելի» նշանակում է «գործող», «շինող» (կրելիք՝ կրողներ): Հետևաբար աշխարհաբարում եղած «գրելիք», «տեսնելիք», «մնալիք» նշանակել են այն առարկան, որ գրում է, այն տարկան, որ մնում է, այն առարկան, որ տեսնում է և այլն: Հետևաբար դրանց ներգոյական հոլովն էլ կլինի «ի գնալիս», «ի տեսնելիս», «ի մնալիս», այսինքն՝ գնացողների մեջ, տեսնողների մեջ, մնացողների մեջ: Ուրեմն՝

Մնալիս եմ, գնալիս եմ, տեսնելիս եմ, նշանակում են «գնացողների մեջ եմ», «մնացողների մեջ եմ», «տեսնողների մեջ եմ», որ մեր այժմյան ըմբռնումով կլինի՝ ներկայաւմ կատարում եմ մնալու, տեսնելու, գրելու գործողությունը: Թվում է, թե այստեղ որոշակի երևում է կոլեկտիվիստական մտածողություն: Ոչ թե «ես եմ գործողությունը կատարում», այլ թե՝ «ես գտնվում եմ այն բոլորի թվում, որոնք գործողությունը կատարում են»: Այդ

<sup>1</sup> Եղնիկ Կողբացի, էջ 28.

Վառուցվածքից երևում է, որ սուբեկտը դիտակցում է իր գործողությունը, սակայն դեռ չի հակադրվում ամբողջ կոլեկտիվին, այլ նրա ամբողջության մեջ է, նա իրեն չի պատկերացնում մենակ գործող, այլ գործողների մի ամբողջ խմբի մեջ գտնվող Պարզ է, որ այստեղ երևում է կոլեկտիվով աշխատանք կատարելու գիտակցման անդրադարձումը, այսինքն՝ պարզապես կոլեկտիվ կենցաղի հասարակական կեցության մի զարմանալի վկայություն է մեր «Ա» ճյուղի գերբայական այս ձեզ: Բայց որոշ է, որ անհատն այստեղ իրեն գիտակցում է իրու անձ, բայց դեռ չի անջատում ամբողջ կոլեկտիվից, դա այն սահմանագիծն է, որտեղից հետո սկսվում է սուբեկտիվ գիտակցությունը ի հակադրություն կոլեկտիվ գիտակցության:<sup>1</sup>

Այս հնէաբանական վերլուծությունը կրկին ու կրկին նշում է, որ մեր բարբառների լեզուն գալիս է այնպիսի հասարակությունից, որը ունեցել է կոլեկտիվիստական կեցություն, այսինքն նախադասակարգային հասարակությունից: Այս հնէաբանությունը մյուս կողմից ցույց է տալիս, որ բայի ներկայի կառուցվածքը «Ա» ճյուղի բարբառներում կոնկրետ է, նկարագրական, ինչպես որ «Ում» ճյուղի կառուցվածքն է:

Այդպես է «Ա» ճյուղի բարբառային մտածողությունը:

Որ «Ա» ճյուղը իր դերբայական ձեզ նույնացնում է «Ում» ճյուղի գերբայական ձեին և նրանից է յուրացըել իր բարբառներում եղած ներգոյական հոլովը, դա երևում է նաև մի այլ փաստից: Հավարիկի բարբառում ներկան կազմվում է հետեւյալ կերպ՝ զրելիս եմ, զրելում ես, զրելում է և այլն: Այսինքն առաջին գեմքի համար ունի «ալիս», էլիս դերբայական ձեզ, մյուս զեմքերի համար «Ում» դերբայական ձեզ: Բայց այդ «Ում»-ը ամբացված է ոչ թե բայիմաստին, այլ ուղղակի անորոշ դերբային: Հավարիկի բարբառի այս ձեերը, հաստատելով մեր վերոհիշյալ միաքը, անվիճելիորեն նաև հաստատում են բոլոր այն լեզվաբանների կարծիքը, որոնք գտնում են, թե մեր ներկայի կառուցվածքը ներգոյական հոլովի կառուցվածքն է և ոչ այլ բան:

«Ե» ճյուղի բարբառների լեզվական մտածողությունը նույն-

<sup>1</sup> Աշխատանքս վերջադրել էի, եթե երեանի Մանկ. Ինստ. գրաբարի գոստիս ընկ. Ա. Աբրահամյանը ինձ հանձնեց հետեւյալ հասկածը Փազառոսից, «Իսկ թագաւորն Արշակ է լոլիսն աեսաներ զկինն» Բուզ. 4-րդ (ԺԷ): Թարգմ. ժամկետ Արշակ թագավորը լացողների մեջ աեսավ այն կնոջը»

պես շատ պարզ է: «Դրել եմ», «կարդալ եմ», որ նշանակում են՝ «գրում եմ», «կարդում եմ», պարզապես կազմված են անորոշ դերբայից և օժանդակ բայից: Անորոշ դերբայի այս ձեր, սակայն, հայցական ձե է, որովհետև գրաբարում ունենք վկայություն, որ անորոշ դերբայի հայցական հոլովը «ի» նախղիրով նշանակում է գործողության կատարման ժամանակ, այսինքն գործողության կատարման ընթացքի մեջ լինելը: Այստեղ ևս տեսնում ենք, որ բայակաղմությունը պարզ նկարագրական բնույթ ունի, այնպես, ինչպես «Ում» և «Ա» ճյուղերի բարբառներում: Այսպիսով՝ մեր բարբառների երեք ճյուղերի բայական կառուցվածքի հիմնական ձևերը նկարագրական են, կոնկրետ, թեև այսօր դրանց ըմբռնումը վերացական է, այսինքն՝ դերբայների նկարագրական հատկությունը փոխարինված է բայական ըմբռնումով՝ ժամանակի և կատարման կերպի գաղափարներով:

Կարծես թե մի քիչ տարբեր են «Կը» ճյուղի բարբառները: Նրանք կազմում են իրենց ներկան «Կը» մասնիկով՝ կը գրեմ, կը գրես: Բայց այստեղ ևս երեսում են նկարագրության հետքերը: Ընդունված է լեզվաբանության մեջ «Կը» մասնիկը համարել «կաբառը», եթե այդ այդպես է, ապա «կգրեմ» նշանակում է «իմ զիրը կա», կամ՝ «իմ գրելը կա»: Այսպիսով բարբառների լեզվական մտածողության մեջ զերիշխում է ձևաբանություն կազմելու նկարագրական հատկությունը, որը ավելի կոնկրետ և պրիմիտիվ ստաղիայի վերապրուէ է: Այստեղ երեսում են լեզվական մտածողության ոչ միայն կցական, այլ դրանից ավելի վաղ՝ անջատական սիստեմի հատկություններ, ավելի կոնկրետ՝ քան կցականությունը: Թեև այդ ձևերի արդի ըմբռնումը վերացական է, բայց ամբողջ կառուցվածքը պրիմիտիվ է:

Դրան հակառակ նկատում ենք, որ գրաբարի լեզվական մտածողության կառուցվածքը վերացական է, թեքական է և ոչ նկարագրական: Այսպիս՝ գրաբարի խոնարհումը ունի 5 տարբերակ, որոնք են՝

ա	ե	ի	ու	ո
աղամ	գրեմ	խոսիմ	թողում	գոմ
աղաս	գրես	խոսիս	թողուս	գոս
աղայ...	գրէ...	խոսի...	թողու...	գոյ...

Աւտումնասիրությունից պարզվում է, որ այս տարբերակները բաղադրված են, այսինքն՝ յուրացված են հայցող, հայկական լեզու դարձող տարբեր լեզուներից, որոնցից յուրաքան-

Հյուրը վերածվել է հայերեն մի բարբառի։ Այդ երևում է նրանից, որ այս տարբերակները արտահայտում են ձայնավոր խոնարհիչներով, որոնք, ինչպես ապացուցված է, առաջացել են էտական բայերի արմատներից։ Պարզվում է, որ նախքան հայերեն բայի կազմվելը, կազմվել է էտական բայի խոնարհումը։ Մեր կարծիքով ամեն մի խոնարհման կազմավորման ճանապարհն այդ է։ Համենայն դեպս խիստ որոշ է, որ խոնարհման կազմավորման պրոցեսը հայերենում տեղի է ունեցել հետևյալ կերպ։ Սկզբնական շրջանում հայկական տերիտորիայի վրա բնակվող հասարակությունները, կասկած չկա, որ ունեցել են պրիմիտիվ լեզուներ։

Եթե նկատի առնենք, որ նորագույն ուսումնասիրությունները երևան են բերում ժեստերի լեզվի կամ գծային լեզվի բազմաթիվ մնացուկներ հայերեն լեզվի մեջ, նշանակում է՝ հընչյունական լեզուն Հայաստանում տեղական ծագում ունի, այսինքն՝ քարե դարի մարդկային հասարակությունը Հայաստանում գծային լեզվից անցել է հնչյունական լեզվին։ Բնական է, որ այդ ժամանակ հնչյունական լեզուն պետք է որ լիներ խիստ ոզրիւմիտիվ, անջատական ստաղիայում, երբ բառերն ունեին միայն լեզսիկական արժեք, երբ լեզուն, հատկապես հնչյունային լեզուն, արտահայտվում էր դիֆուզ իմաստ ունեցող միավորներով, բառ-նախադասություններով։ Գիտենք, որ ամենապրիմիտիվ վիճակում այդ բառ-նախադասությունները առտեմների գերանունների ֆունկցիա ունեին, այսինքն՝ «դեր տուաեմներ»<sup>1</sup> էին։ Գիտակցության բարդացման հետ զուգընթաց մի կողմից լեզվի մեջ կատարվում է կառուցվածքային դիֆերենցիացիա, առանձնանում են բառերը նախադասություններից, երևում են ստացական գերանունները, մյուս կողմից՝ իմաստաբանական դիֆերենցիացիա՝ պոլիսեմանտիկ բառը իմաստների ճեղքման պատճառով դառնում է բառաբուն, որից ածանցվում են բազմաթիվ առարկաների անունները, որպես մի տեսակ ածանցումներ, հիմնական գաղափարի ածանցյալներ, Մառի տերմինով՝ դերիվատներ։ Այսպես օրինակ «կար» ձեռք բառից առաջանում են՝ կար (կարող, այսինքն՝ ձեռնավոր), կառ (կարկառել—ձեռքը մեկնել), կեր, կոր, կեռ, կուր, կուռ (ն), կու(ել), կիր (կիրառել, կրել)։ և այլն։

<sup>1</sup> Բառ Մառի աերմինոլոգիային

Այնուհետև՝ «հան» բնից՝ հան(ել), հան(դիպել), հան(ճար), հեն(ել), հանգել, հէնք, հին(ել) և այլն։ Նույն բնի «հար» տարբերակից՝ հար(ուստ), հար(կանել), զար(կել), ար(կանել), առ(ն)-ուլ), առ(ն)ել), առ և այլն։

Այս ածանցումները, սակայն, ունենում են միայն լեքսիկական արժեք։ Նախադասություն կառուցելու հատկությունը մնում է դերանվան՝ «զեր առտեմի» սեփականությունը։ Ուստի նախնական նախադասությունները, որ պրիմիտիվ հասկացություն են արտահայտել, որ նախատրամաբանական հասկացողություն, համամասնակցության օրենքի երևույթ են դրսեորում, կտղմված են եղել առարկա նշանակող բառից և տոտեմի դերանունից, որով ամեն մի գիտակցված առարկա վերագրվել է տոտեմին, կցվել է նրա անվանը։ Այսպես՝ ցուրտ է, շոգ է, մուրէ, լույս է, որո է և այլն բոլորը նշանակել են՝ տոտեմն է ցուրտ, տոտեմն է շոգ, տոտեմն է լույս, տոտեմն է որս և այլն։ Հետագայում մեծ, շատ մեծ տեղաշարժ պետք է լիներ մարդու գիտակցության մեջ, որպես իր արտադրական կյանքի տեղաշարժի արտացոլում, որպեսզի մարդը կարողանար հասկացություն ունենալ և ստեղծել իմ, \*fn, նորա ստացական դերանունները, որպեսզի կարողանար որոշակի սահմանազատել սեփական հասարակայնությունը օտարից։ Դրա հետեանքն է լինում՝ ցուրտ է իմ, լույս է իմ, շոգ է իմ, կամ ուրիշ կերպ՝ իմ է ցուրտ, քո է շոգ, նորա է լույս։

Պրիմիտիվ տոտեմական հասարակության մեջ դարձանում են արտադրողական ուժերը, հազարավոր տարիներ ապրած մարդը ձեռք է բերում բնության երևութները ճանաչելու փորձ, մշակում, կատարելագործում է արտադրական միջոցները, որոնք իրենց հերթին մշակում ու դարձացնում են նրա գիտակցությունը։ Մարդը աստիճանաբար հայտնագործում է, որ արտադրության մեջ ներգործոն դերը ինքն է կատարում, ինքն իր կոլեկտիվի մեջ, ուստի նրա գիտակցության մեջ առաջ է գալիս մի երրորդ հեղաշրջում, նա իրեն զգում է ակտիվ և ներգործող ենթակա և այդ արտահայտում է հին ձեւերով, որից ստացվում է այն, որ իրը և հին մտածողության մնացորդ գրաբարի մեջ ունենք՝ արարեալ է իմ, առեալ է նորա և այլն։ Այս կառուցվածքը շարունակում է պրիմիտիվ լինել, նկարագրական, թեև իմաստով արդեն վերացական է։ Երբ մարդկային հասարակությունը ներսում աստիճանավորվեւմ է, ենթարկվում է տարբե-

րակման, տեղի է ունենում հասարակական բնեուցում՝ մասնավոր սեփականության հիման վրա անջատվում է անհատը, ընտանիքը, դիտակցության մեջ առաջանում է երրորդ հեղաշրջումը։ Մարդն իրեն վերագրում է գործողի բոլոր հատկություններ, զգում է իր տիրապետությունը բնության վրա, աշխատանքի գործիքի վրա, արտադրության վրա, նա դառնում է ես, դու, նա և գործում է իրրե ես, դու, նա։ Այստեղ այն նախկին դերանունը, որ կատարում էր հանրագործ կամ ընդհանուրական սուբեկտի դեր, մի կողմից դառնում է բոլորի համար դերանուն, մյուս կողմից պնդող բառ, հաստատող բառ, այսինքն՝ եական բայ։ Այսպես առաջանում են հայերեն լեզվի ա, ե, ի, ո, ու դերանունները և նույն ա, ե, ի, ո, ու էական բայերը, իսկ ստացական դերանունները, որ երկար ժամանակ կատարում էին անձնականների դեր, կորցնում են իրենց բովանդակությունը և միանում էական բայի արմատին, ու ստացվում է եմ, ես, ե, եմք, եք, են, եի, եիր, եր, եամ, եիմ, եին։ Եվ այսպես առաջանում է էական բայի խոնարհումը։ Այդ ժամանակ արդեն դիֆերենցիայի է ենթարկվում բառապաշարը, սահմանագծվում են միմյանցից խոսքի մասերը, առաջանում են՝ գոյական, ածական, թվական և այլն։

Այսպիսի ֆակտուրայով և կառուցվածքով լեզուն աղաւկերպով կարող է ամեն տեսակ նախադասություն կազմել, օգտագործելով գոյականը, ածականը, թվականն ու էական բայը։ Այս վիճակը անջատականից կցականը անցնելու վիճակ է։ Նախադասությունը հեշտությամբ կարող է կազմվել հետեւյալ ձեռվես գրի եմ, ես գործի եմ, ես կարմիր եմ և այլն։ Այսպիսով ձեռվավորվում են խոսքի բոլոր մասերը, բացի բայերից։ Մի բայ, որ ընդհանրական բայ է, որ փոխարինում է բոլոր բայերին և թույլ չի տալիս նախադասությունը կառուցելիս բայի պակասում զգալ, դա էական բայն է։ Հասարակական հարաբերությունների բարդացումը, դասային հարաբերությունների զարգացման հետևանքով, բնական ձևով արտացոլվում է նաև գիտակցության աեջ. վերջինս ձեռք է բերում էլ ավելի մեծ վերացականություն, որ չէր կարող բավարարվել պլրիմիտիվ նկարագրական ձևերով և այդ գրանորվում է լեզվի մեջ բայերի կատեգորիայի առաջացումով և նրանց իրեն խոսքի մաս՝ ձևավորումով։ Գրի եմ դառնում է գրեմ, գործի եմ դառնում է գործեմ, կարմիր եմ դառնում է կարմրեմ և այլն։ Պարզ է, որ հայերեն

գրաբար բայերը իրենց ձևավորումը ստացել են գոյականից, ածականից և թվականից, վերջիններից ավելի ուշ՝ այդ խոսքի մասերի և էական բայի միացման հետևանքով։ Այդ շրջանում տրղեն լեզուն նկարագրականից անցնում է վերացական վիճակի, կցականից անցնում է դեպի թեքականը։ Գրաբար լեզուն կազմավորվում է Հայաստանի բնակչության հասարակական զարդացման այդ պրոցեսում։ դա, հավանական է, այն ժամանակ է եղել, երբ Հայկական բարձրավանդակում 1-ին հազարամյակի ողջ ընթացքում տեղի է ունենում դասակարգային հասարակություն կաղմիկելու պրոցեսը, սկզբից միայն առանձին տեղերում, առանձին տեղամասերում կամ դավառամասերում և հետո ամբողջ հայկական տերիտորիայում։ Կազմավորման այդ պրոցեսում գրաբար լեզուն օգտագործում է բազմաթիվ ձևավոր-կցական լեզուների լեզվական ֆակտուրան, այսինքն՝ յուրացնում է այդ լեզուներից իր ամբողջ բառապաշարը, էական բայերի բոլոր տարբերակները, հոլովական ձևերի բոլոր տարբերակները և, լինելով վերնախալ դարձած կամ դարձող հասարակայնության գիտակցության դիսկորսն միջոց, մշակում է իր յուրահատկությունները մի կողմից լեզվական վերացական մտածողության օգնությամբ և մյուս կողմից ամբողջ լեզվական այն ֆակտուրայով, որ նա կարողանում է յուրացնել տարբեր լեզուներից։

Լեզվական գոյացման այդ պրոցեսի հետևանքով գրաբար լեզուն առաջ է անցնում ամեն մի առանձին լեզվից, որից նա օգտավել է։ Նու հնարավորությունն է ունենում սինթեզի ենթարկելու լեզվական ֆակտուրայի յուրացված բոլոր տարբերակները, և այդ պատճառով էլ գրաբարի մեջ ստացվել է սիստեմ, այսինքն՝ թեքականությունն, մինչդեռ ամեն մի բարբառում պահպանվել է կցականությունը։

Զմոռանանք ասել, որ լեզուների կազմավորման այդ պրոցեսը մի ուրիշ նորույթ էլ է բերում։ Տարբեր լեզուների մեջ տուածանում են նմանություններ, որոնք քանակորեն ամելով վերածվում են լեզվական ընդհաննբությունների և մի ընդհանուր երանդ են տալիս բոլոր միմյանցից տարբեր եղած լեզուներին, դարձնելով նրանց միևնույն լեզվի բարբառներ։ Երկրորդ դարի սկզբներին տերիտորիայի ամբողջականացումը այդ բոլորը դարձնում է հայերեն լեզու, ինչպես բոլոր ցեղերին, ցեղախմբերին ու ժողովուրդներին՝ մի մեծ հայ ժողովուրդ։

Այսպիսով գրաբարի ստադիալ գարգացումը բերում է նրան

մինչև թեքականությունը, առաջ մղելով նրան շնորհիվ այն բանի, որ նա լինում է սինթեզի հետևանք, ընդհանրացման հետևանք։ Այսպես է բացատրելի գրաբարի թեքականությունը, որ ստադիալ վիճակով ավելի առաջ է անցել, քան բարբառները Բարբառների համար գրաբարի վերացական լեզվական դատաղությունը ըմբռնելի չէ, որովհետև այդ լեզվական մտածողությունը բարբառներից ավելի առաջ է անցել, մինչդեռ բարբառների լեզվական մտածողությունը գրաբարին մատչելի է և գրաբարը կարող է այն յուրացնել, ըմբռնել։ Իմ ասելս այն է, թե գրաբարը կարող էր բարբառներին ավելի հեշտությամբ հասկանալ, քան բարբառները գրաբարին։ Այդ է պատճառը, որ մենք նկատում ենք, որ գրաբարի մեջ բարբառների կցական ձեզերը կամ անալիտիկ ձեերը թափանցել և յուրացվել են (հիշենք գրաբարի բաղադրյալ ժամանակները), մինչդեռ գրաբարյան բոլոր սինթետիկ-թեքական ձեերը բարբառներում յուրացվել են միայն բառական արժեքով, լեզսիկական արժեքով։ Օրինակ՝ շնորհիւ, կարծեօֆ, արդեօֆ, եավաստեաւ գրաբարի գործիական հոլովի ձեեր են, իսկ բարբառներում՝ սկզբնաձեեր։ Գրեթէ, երամայեա՛ երամմէ, եամարեա՛, լուր և այլն, գրաբարի բայական ձեերն են, իսկ մեր հասկացողությամբ՝ այդ բոլորը սկզբնաձեզեր են։ Այսպիսով բարբառային մտածողության մեջ ինչ որ առնվել է գրաբարից, ստացել է միայն բառական արժեք։

Մեր գրական լեզուն, ինչպես և արևմտահայ գրական լեզուն ունեն բարբառների լեզվական մտածողությունը, ոչինչ ավելին։ Մեր գրական լեզուների լեզվական մտածողությունը անալիտիկ է, նկարագրական է, և ոչ մի բան, որ գրաբարի լեզվական մտածողությունից կարող է գալ մեր լեզուների մեջ, որպես այդպիսին յուրացվել չի կարող։ Մեր գրական լեզուները, ոգտագործելով բարբառների օբեկտիվ հատկությունները, յուրացըել են գրաբարի բառապաշտարը և միայն բառապաշտարը։ Ինչ էլ որ թափանցի գրաբարից այդ լեզուների մեջ՝ կարող է պահպանվել ու գիտակցվել միայն բառական կամ մի առանձնացած ոճական արժեքով և ոչ այլ կերպ։ Այսպես՝ հօգուտ բառը, որ գրաբարի լեզվական մտածողության համապատասխան կառուցվածք ունի, մեզ մոտ առնվում է իրըն բառ և գրաբարավարի դարձնելու համար, զիտենալով, որ ի նախդիրը մեր համար ձեզին է համապատասխան, գործածում են ի հօգուտ, որ նշանակում է թե՝ արդի հայերը գրաբարի լեզվական մտածողության

հանդես բոլորովին անտարբեր են: Այսպիսի օրինակները կարե-  
լի է քաղմացնել:

Մնում է եզրակացնելու, որ մեր գրական լեզուների և  
գրաբարի մեջ կարող է լինել միայն մեկ հարաբերություն՝ բա-  
ռական փոխառություններ, լեզուիկական ընդհանրություն և ոչ  
լեզվական մտածողության ընդհանրություն: Մեր գրական լեզվի  
և գրաբարի լեզվական մատերիալի, լեզվական ֆակտուրայի  
մեջ կա բացարձակ ընդհանրություն, իսկ լեզվական մտածողու-  
թյան մեջ՝ բացարձակ տարբերություն: Այդ պատճառով սխալ  
ենք համարում արևմտահայ գրագետների գիծը, որոնք նպատակ  
ունեն որդեգրելու և մերելու գրական լեզվի մեջ գրաբարի լեզ-  
վական մտածողությունը: Դա մեր հանրության, մեր ժողովրդին  
անմատչելի է և նրա կողմից անընդունելի, ուստի այդ տենդեն-  
ցը երեան բերողները մեր ժողովրդի գրական կուլտուրային  
օգուտներ չեն առ և իրենք կմնան նրան անհասկանալի ու  
օտար: Մենք գրաբարից կարող ենք վերցնել ամեն ինչ միայն  
բառական արժեքով, գրաբարի ամեն մի լեզվածեալիսարի  
և մեր գրական լեզվի մեջ կարող է առնվազան միայն բառական  
արժեքով իրեն բառական սկզբնածեալ, իսկ բարբառները մեր  
գրական լեզվին ավել են լեզվական մտածողություն և, եթե  
չեն սպասվել նրանց լեզվական մտածողության հարստություննե-  
րը, դեռ կարող են էլի տալ Երբ հարց է գրվում բարբառների և  
գրաբարի օգտագործման մասին, միայն ու միայն այդպես կա-  
րող է լուծվել այդ հարցը: Չենք ժխտում, իհարեւ, որ բարբառ-  
ների բառապաշարը նույնպես մեր գրական լեզվի սեփականու-  
թյունն է, սակայն նրանց բառապաշարի հիմնական շերտն էլ  
գրաբարինն է: Մեր լեզվի ժողովրդայնությունը, որ մեր լեզ-  
վական քաղաքականության գլխավոր գիծն է, այդ  
երկու հիմնական սկզբունքները միասնական կերպով պահպա-  
նելու է: Այդ ճանապարհով մեր լեզուն դարձել է ու կմնա ու  
կշարունակի լինել համաժողովրդական գրական լեզու:

